

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Ուսուցչի օրվա կապակցությամբ

04.10.2017



Սիրելի ուսուցիչներ,

Ձերմոտեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ: Այս գեղեցիկ տոնը ևս մեկ առիթ է ցուցաբերելու այն մեծ հարգանքը և ուշադրությունը, որ տածում ենք ուսուցչի և նրա կողմից իրականացվող նվիրական աշխատանքի նկատմամբ:

Դարեր ի վեր հայ ժողովուրդը բարձր է գնահատել և արժևորել ուսուցչի դերն ու վաստակը, ուսուցիչը միշտ իր արժանի, հարգալից ու պատվավոր դերն ու նշանակությունն է ունեցել մեր հասարակության մեջ: Կրթությունը Հայաստանի Հանրապետության կանոնադրաբան հերթափոխություններից մեկն է:

Ձեզ է վստահված դժվարին, բայց և ամենապատվաբեր և շնորհակալ առաքելությունը՝ Հայաստանի Հանրապետության համար արժանի քաղաքացու, զինվորի, ապագա գիտնականի, քաղաքական և հասարակական գործչի կրթման և ձևավորման գործը:

Ձեզ է տրված մեր սերունդների հայեցի դաստիարակության հայրենանվեր գործը: Դուք ձեր սաներին օգնում եք բացել գիտության գաղտնի դռները, բացահայտում հայ ազգի ապագա հանճարներին՝ նրանց մեջ սերմանելով սերն ու նվիրվածությունը հայրենիքի նկատմամբ:

Չկա ավելի հրաշալի բան, քան սովորելը և նոր հորիզոններ բացահայտելը:

Գիտելիքը մարդուն դարձնում է ավելի ուժեղ և իմաստուն: Ճանապարհը դեպի գիտելիք դժվարին է, իսկ ձեր օգնությամբ այն դառնում է առավել հետաքրքիր ու իմաստալից:

Սիրելի ուսուցիչներ, կրկին շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ, մաղթում եմ ձեզ հաջողություն, ստեղծագործական բարձունքներ, քաջառողջություն և ամենայն բարիք: